ՓԻԼԻՄՈՆԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Այս գիրքը անձնական նամակի մի օրինակ է, որը շատ ընդունված էր առաջին դարի հունա-հռոմեական աշխարհում: Հավանաբար այն տեղավորվել է պապիրուսի մի թերթիկի վրա (տես՝ 3 Հովհաննես): Հայտնի չէ, թե ում է այն առաջին հերթին ուղղված եղել:
1. Փիլիմոնին
2. Ապփիային և Արքիպոսին (տես՝ Կող.4:17)
3. թե՞ ինչ որ իմաստով ամբողջ տնային եկեղեցուն

Բ. Այս նամակը պատուհան է բացում դեպի՝
1. Պողոս Առաքյալի հովվական մեթոդները
2. առաջին դարի տնային եկեղեցիները (տես՝Հռոմ.16:5, 1 Կորնթ.10:19, Կող.4:15):

Գ. Քրիստոնեությունը արդեն արմատապես փոխում էր Միջերկրական աշխարհի սոցիալ միջավայրը: Ավետարանի դեմ սոցիալական արգելապատնեշները վայր էին ընկնում (տես՝ 1 Կորնթ.12:13, Գաղ.3:28, Կող.3:11):

ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Նամակի անհատական բնույթը ընթերցողներից շատերին համոզում է (բացառությամբ Ֆ.Ս.Բաուրի), որ հեղինակը Պողոս Առաքյալն էր:

Բ. Փիլիմոնի և Կողոսացիների նամակը սերտորեն կապված են իրար՝
1. միևնույն ծագումը
2. միևնույն մարդիկ են ողջունում
3. միևնույն վերջաբանը
4. Կողոսացիների նամակը հասցրել է Տյուքիկոսը և ճամփորդել է Ոնեսիմոսի հետ (տես՝ Կող.4:7,9): Եթե Փիլիմոնի նամակը Պողոսն է գրել, ուրեմն նաև Կողոսացիներինը (որի շուրջ կասկածում են մի քանի ժամանակակից գիտնականներ):

Գ. Այն թվարկվում է Պողոսի նամակների ցանկում թե՛ վաղ շրջանի հերետիկոս Մարկիոնի կողմից (որը Հռոմ եկավ մ.թ.140-ականներին) և թե՛ կանոնական գրքերի ցանկում, Մուրա-տորիան Պատառիկում (գրված Հռոմում՝ մ.թ. 180-200թթ-ին):

ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Այս նամակի տարեթիվը առնչվում է Պողոսի բանտարկություններից մեկի հետ (Եփեսոս, Փիլիպպե, Կեսարիա կամ Հռոմ): Գործքում արձանագրված փաստերի հետ լավագույնս հա-մընկնում է հռոմեական բանտարկությունը:

Բ. Եթե Հռոմն է համարվում բանտարկության վայրը, ապա հարց է առաջանում, ո՞ր ժամանակի: Պողոսը բանտում է եղել 60-ականների սկզբին և սա արձանագրված է Գործքում: Այնուհանդերձ, նա ազատվում է և գրում Հովվական Թղթերը (1 և 2 Տիմոթեոսի թղթերը և

Տիտոս) և ապա նորից է բանտարկվում և սպանվում է նախքան մ.թ.68 հունիսի 9-ը (Հերովդեսի ինքնասպանության օրը): Կողոսացիների, Եփեսացիների և Փիլիմոնի գրառման տարեթվի ամենախելամիտ ենթադրությունը համարվում է Պողոսի առաջին բանտարկությունը՝ 60-ականների սկիզբը: Փիլիպպեցիների նամակը գուցե գրվել է 60-ականների կեսերին:

Գ. Տյուքիկոսը, Ոնեսիմոսի հետ միասին, հավանաբար վերցրել էր Կողոսացիների, Եփեսացիների և Փիլիմոնի նամակները՝ տանելու Փոքր Ասիա: Հետագայում (հավանաբար մի քանի տարի անց) Եպափրոդիտոսը՝ լավանալով իր ֆիզիկական հիվանդությունից, հետ է տանում Փիլիպպեցիներին ուղղված նամակը իր տնային եկեղեցի:

Դ. Պողոսի գրքերի հավանական ժամանակագրությունը ըստ Ֆ. Ֆ. Բրյուսի և Մյուրի Հարրիսի (աննշան հարմարեցումներով)՝

	Գիրքը	Տարին	Գրառման վայրը	Կապը Գործքի հետ
1	Գաղատացիներ	48	Սիրիայի Անտիոք	Գործք 14:28, 15:2
2	1 Թեսաղոնիկեցիներ	50	Կորնթոս	Գործք 18:5
3	2 Թեսաղոնիկեցիներ	50	Կորնթոս	
4	1 Կորնթացիներ	55	Եփեսոս	Գործք 19:20
5	2 Կորնթացիներ	56	Մակեդոնիա	Գործք 20:2
6	Հռոմեացիներ	57	Կորնթոս	Գործք 20:3
7-10	Բանտի նամակները			
	Կողոսացիներ	60-ի սկիզբ	Հռոմ	
	Փիլիմոն	60-ի սկիզբ	Հռոմ	
	Եփեսացիներ	60-ի սկիզբ	Հռոմ	
	Փիլիպպեցիներ	ուշ 62-63	Հռոմ	Գործք 28:30-31
11-13	4րդ Միս. Ճամփորդություն			
	1 Տիմոթեոս	63 (կամ ուշ,	Եփեսոս (?)	
	Տիտոս	63՝նախքան	Մակեդոնիա	
	2 Տիմոթեոս	64 մ.թ.68)	Հռոմ	

ՆԱՄԱԿԸ ԳՐՎԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ (Փիլիմոնի նամակում նշված մարդիկ)

Ա. Փիլիմոնը Ոնեսիմոսի ստրկատերն էր: Նա ապրում էր Կողոսիայում: Հավանաբար նա դարձի էր եկել Պողոսի միջոցով, երբ վերջինս ծառայում էր Եփեսոսում:

Բ. Ոնեսիմոսը Փիլիմոնի փախուստի դիմած ստրուկն էր: Նա նույնպես Պողոսի միջոցով էր դարձի եկել, երբ վերջինս գտնվում էր Հռոմի բանտում (մ.թ.61-63թթ): Հայտնի չէ, թե ինչպես են ծանոթացել Պողոսն ու Ոնեսիմոսը: Գուցե՝

1. երկուսն էլ բանտարկված էին
2. Ոնեսիմոսը հանձնարարությամբ էր ուղարկվել Պողոսի մոտ
3. Ոնեսիմոսը փնտրել էր Պողոսին խորհուրդ հարցնելու, երբ մտափոխվել էր իր փախուստի համար

Գ. Եպափրասը հավատացյալ էր Փոքր Ասիայից և Լիկուս Գետի Հարթավայրում գտնվող Եկեղեցիների (Կողոսիա, Լավոդիկե և Երապոլիս): Նա էր բանտում գտնվող Պողոսին տեղեկացրել Կողոսիայում առկա հերձվածողության և Փիլիմոնի հավատարմության մասին:

Դ. Տյուքիկոսը Պողոսի երեք նամակները՝ Կողոսացիների թուղթը, Եփեսացիների թուղթը և Փիլիմոնին ուղղված նամակը, այս տարածաշրջան հասցնողն էր (տես՝ Կող.4:7-9, Եփես.

6:21-22): Ոնեսիմոսը նույնպես վերադարձավ նրա հետ, որպեսզի տեսնի իր տիրոջը (տես՝ Փիլ. 1:11): Փիլիմոնի թուղթը Նոր Կտակարանում պահպանված երկու անձնական նամակներից մեկն է (տես՝ 3 Հովհաննես):

Գրեթե հինգ տարի անց (մ.թ. 110թ) Իգնատիուսը՝ Հռոմ գնալու նահատակության իր ճանապարհին, մի նամակ գրեց («Եփեսացիներին» 1:3) Եփեսոսի երեցին, որի անունն էր Ոնեսիմոս: Հնարավոր է, որ նա եղել է այս դարձի եկած ստրուկը:

ՆԱՄԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ

Ա. Ցույց է տալիս, թե ինչպես է Պողոսը կիրառում իր առաքելական իշխանությունն ու հովվական քաջալերանքը:

Բ. Ցույց է տալիս, թե ինչպես է Քրիստոնեությունը ստրուկներից և ստրկատերերից, հարուստներից ու աղքատներից դարձնում եղբայրներ ու քույրեր: Այս ճշմարտությունը ժամանակի ընթացքում արմատապես փոխելու էր Հռոմեական Կայսրությունը:

Գ. Ցույց է տալիս Պողոսի հավատքը, որ նա ազատվելու է Հռոմեական բանտարկությունից և վերադառնալու է Փոքր Ասիա:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Հետևաբար, մեկ անգամ նստելով ընթերցե՛ք սուրբգրային տվյալ գիրքը: Սահմանե՛ք ամբողջ գրքի կենտրոնական թեման ձեր իսկ բառերով (ընթերցանության ցիկլ #1):

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրական ժանրը

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Հետևաբար մեկ անգամ նստելով երկրորդ անգամ կարդացե՛ք ամբողջ սուրբգրային տվյալ գիրքը: Ընդգծե՛ք հիմնական թեմաները (ընթերցանության ցիկլ #2) և արտահայտեք թեման մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. Եվ այլն